ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԷԱՃԾՁԲ-12/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15.02.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից «ԴԱՎԹՅԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ադամ Դավթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 18.12.2018թ. կնքված № ԷԱՃԾՁԲ-12/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված համացանցային (www) էջի ձ–ավորման ծառայություններ (ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի սպասարկում) (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 490 000 (մեկ միլիոն չորս հարյուր ինսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ Տ և ՀԿ** վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԴԱՎԹՅԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ՓԲԸ
հ/հ 900011144079	հ/հ 15100293087400100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 07618736
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1
N ԷԱՃԾՁԲ-12/1-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Հ/հ	Ծառայության անվանումը	Հ/մ	Քանակ	Ընդհանուր գին	Գնման ժամանակացույց
2	համացանցային (www) էջի ձ–ավորման ծառայություններ (ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի սպասարկում)	դրամ	1	1490000	2019թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 05.12.2019թ

Հավելված N 2
N ԷԱՃԾՁԲ-12/1-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	Համաձայնագրի գին /ՀՀ դրամ/	Վճարումը կիրականացվի 2019թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝										
			Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ
2	համացանցային (www) էջի ձ–ավորման ծառայություններ (ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի սպասարկում)	1490000	372500	372500	745000	745000	745000	1117500	1117500	1117500	1490000	1490000	1490000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

Միջանցիկ կոդ՝ ըստ CPV դասակարգման՝ 2-րդ չափաբաժին 72411300/503

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԴԱՎԹՅԱՆ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ